այն եզրակացության, որ Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի 10.04.2023 թվականի թիվ 770-Ա որոշումը ենթակա է անվավեր ճանաչման:

**5. Դատարանի իրավական վերլուծությունները և եզրահանգումը դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ օրենսդիրը դատական ծախսերի բաշխման հիմքում դրել է համամասնության սկզբունքը, որը պետք է համապատասխանի բավարարված պահանջին:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ հայցը բավարարվելու պարագայում պատասխանողից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի համար նախապես վճարված գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ և 198-րդ, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝ Դատարանը

**ՎՃՌԵՑ**

1. «Կիր-Քար» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ «Կիր-Քար» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 10.04.2023 թվականի կայացված 770-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, բավարարել՝

անվավեր ճանաչել «Կիր-Քար» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի 10.04.2023 թվականի թիվ 770-Ա որոշումը:

2. Երևանի քաղաքապետարանից հօգուտ «Կիր-Քար» ՍՊԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

4. Վճիռը կատարում պահանջող մասով կամովին չկատարելու դեպքում կկատարվի ՀՀ հարկադիր կատարման ծառայության միջոցով:

**ԴԱՏԱՎՈՐ** **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**